ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- մարտի 2022 թվականի №---Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի №86Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, և հաշվի առնելով «ԻԶՈԴՐՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի փետրվարի 17-ի և մարտի 1-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի մարտի 12-ի «ԻԶՈԴՐՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Յաղդան» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №86Ա որոշմամբ «ԻԶՈԴՐՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Յաղդան» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0239 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ՝ որոշման՝

1) 1-ին կետում «Լոռու մարզի Յաղդան համայնքում՝ Տաշիր գետի Լոռվա ջրանցքի վրա» բառերը փոխարինելով «Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի վարչական տարածքում

(գյուղ Յաղդան)՝ Լոռվա ջրանցքի վրա (ոռոգման համակարգ)», իսկ «15 տարի» բառերը փոխարինելով «մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով.

2) 2-րդ կետով հաստատված հավելվածի 3-րդ կետում «2022 թվականի մարտի 12-ը» բառերը փոխարինել «մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով:

2. «ԻԶՈԴՐՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝ «Յաղդան» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանված տասնհինգ տարվա ժամկետը «ԻԶՈԴՐՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության համար ավարտվում է 2022 թվականի մարտի 12-ին:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մարտի 12-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
մարտի 2022թ.